Մ. Յու. Լերմոնտով

«ՀԱՅՐԵՆԻՔ»

(հատված)

Սիրում եմ ես հայրենիքս, սակայն սիրով տարօրինակ:
Եվ անզոր է իմ այդ սիրույն միտքս մատնել լուրջ պարտության:
Ո՛չ այն փառքը, որ գնել է տաք արյունով նա շարունակ,
Ո՛չ հանգիստը, որ լեցուն է ինքնավստահ հպարտությամբ,
Ո՛չ էլ նրա նվիրական ավանդները մութ անցյալի
Իմ մեջ երբեք չեն հարուցում երազանքներ ուրախալի:
Բայց սիրո՜ւմ եմ, սիրո՜ւմ եմ ես – ինչի՞ համար՝ ե՛կ հասկացիր–
Նրա անապ ստեպների լռությունը ցրտից սառած,
Նրա թավուտ անտառների տարուբերումն անծայրածիր
Ու գետերի վարարումը՝ ծովեր դառած:
Գյուղամիջյան ճանապարհով սիրում եմ ես թռչել կառքով
Եվ հայացքով ներթափանցած՝ մթան քողը հետախուզել,
Փափագելով տաք օթևան՝ տեսնել լույսեր տխուր շարքով,
Տրտմաթախիծ գյուղակների դողդո՜ջ լույսեր:

(թարգմ.՝ Պարույր Սևակի)